ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 23

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . . . 14 դրան
Գաւառներում . . . . . 20 դրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ր. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 դրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Ցայտարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Զորրորդ ,, ,, ,, 5 »

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից ինդրւումէ դրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ։
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու։
3. Մենք մերժում ենք ,,ա'' ի և ,,օ'' ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ –ու–ով։
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում։ Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը։
5. Զի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը։
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն վերծ է համարում պատասխանատուութիւնից։
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։
8. Հասցէները փոխելու համար պէտքէ մեզ ուղարկել 2 դրան 10 շահի։

№ 23 1912 Թ. ՇԱԲԱԹ 11 ՕԳՈՍՏՈՍԻ 1912 Թ. № 23

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Ծախւում է հանգուցեալ Նիկողայոս Մելիք Բաբաջանեանի տունը, որ գտնւում է Ղալի Բաղան թաղում։ Տունն ունի փողոցի կողմում երկու սենեակներ, երկուական ընդարձակ սանդուխանաներով իրենց յետևում։

Այդ սենեակների հանդէպ՝ բակի միւս կողմում կայ մի ընդարձակ հիւրասենեակ մի փոքր նախասենեակով։ Յետևում կայ նաև մի փոքրիկ բակ խոհանոցով և թոնրատնով։ Զերգամիները ըստ ամենայնի յարմարաւոր են։

Գնել կամեցողները թող բարեհաճեն դիմել Արամեան դպրոցի հոգաբարձուներից պ. Ա. Բարխուդարեանին և կամ պ. Դր. Մելիք-Ազարեանին

5—3

ԱՆՏԷՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՍԻՑ

—

Վաղուց է, որ մենք «Միտքում» ձայն ենք բարձրացնում մեր կորչող և յափշտակութան ենթակայ ազգային—եկեղեցական կալուածների համար։

Վաղուց է, որ մենք ալարմ ենք հնչեցնում գաւառի մեր անպաշտպան և յար կեղեքուող ժողովրդի այլադաւանութիւն ընդունելու շուրջը։

Սակայն մեզ լսող չեղաւ ու չկայ։ Կայ մեր դէմ միայն... կրճատոց, սպառնալիք և...

Ընդունենք որ մեր վերաբերմամբ այդ բոլորն էլ կատարուեցին։ Ընդունենք, որ անգամ Թաւրիզից կարող ենք հեռացած լինել։

Արդեօք մեր հեռանալով, արդեօք մեզ սպառնալով մեր ժողովուրդը կորչելուց և մեր սեպհականութիւնները կապուտ կողոպտի ենթակայ լինելուց կապահովուե՞ն, կազատուե՞ն։

– Բնաւ երբէք։

Ով Մամուլի ձայնն արհամարհում է, նա աքացում է խթանին։ Իսկ յայտնի է, թէ ո՞վ կվնասուի դորանից։

Ներկայ դէպքում, երանի՜, վնասողը միայն մի անհատ լինէր։ Տարաբաղդաբար այստեղ անհատի հարց չկայ։ Խնդրի առարկան ի սփիւռս Ատրպատականի ցրուած մեր հողերն ու ժողովուրդն են, որ կորչում, անյայտանում, օտարանում և յափշտակւում են։

Կեղեքումներին վախճան չինելով և մշտական դիմումներին ի պատասխան առաջնորդարանից էլ օգնութիւն չտեսնելով՝ Ուրմիոյ շրջանի անօգնական ժողովրդից սկսել են 30 և աւելի տնով այլադաւան լինել։

Նման երկիւղ երկար ամիսներից ի վեր լսւում է Խոյից և այլ տեղերից։ Ի՞նչ են անում առաջնորդը և առաջնորդարանը, որ շատ վաղուց գիտեն ու լսել են այդ ամենը։

Ձեզ դէտ են կացուցել ժողովրդի վրայ... և կայ ապագայի պատասխանատուութիւն։

Ս. Թադէի վանքի հողերն են խլուել ու խլւում։ Դուխարղանի 3 խալվար հանգստարանը գրաւուած է թուրքերից և բոստան դարձրուած։ Մեր աչքի առաջ, Թաւրիզում հանգստարանի հող է գրաւուում։

Նախավկայի հողերը, լսում ենք, Նախիջևանի հոգ. կառավարութիւնը աճուրդի է դրել 800 ռուբլով։ Արդեօք մի հարցնող կայ ինչո՞ւ և ի՞նչ իրաւունքով։ Ո՞ւր են գնում այդ փողերը, մինչ դեռ այստեղ քանդւում է մեր աւերակ առաջնորդարանը։

Ղարադաղի ազգապատկան գիւղերից հողեր յափշտակող խաները շղթայուած Թաւրիզ են բերուել։ Բերդթաղի հոգաբարձական ընտրական II ընդհ. ժողովում որոշուեց, որ առաջնորդարանը դատ վարէ դորանց դէմ, որքան մենք գիտենք, այդ առթիւ էլ ոչինչ ձեռնարկուած ու կատարուած չէ։ Գործեր, կիսատ թողած անվերջ գործեր.... Մամեդովի ձեռքով 50 հազար ռուբլուց աւելի արժողութեամբ Նախավկայի գրաւուած հողերի դատն ի՞նչ եղաւ։ Մի դատ՝ որ այնքան նպաստաւոր ընթացք է ընդունել հիւպատոսարանում բարեացակամ կօնսուլ Միլլերի դատավարութեամբ։ Հարցնում ենք ինչո՞ւ քնեց, ինչո՞ւ կիսատ մնաց այդ խոշոր գործը։

Իրազեկները մեզ հաղորդում են Ատրպատականում ցրուած մեր մեծասահման կալուածների արժէքը ½ միլիոնից անցնում է, մինչ դեռ հոգևոր իշխանութիւնը չգիտէ շատ տեղեր ի՞նչ ունի, իսկ շատ տեղերում էլ օրինականացնում է յափշտակութիւնները իր լռութեամբ։ Ի՞նչքան բայեր և կսրիքներ չէին լրացուի այդ անտէր և բաղդին թողնուած հողերի մշակմամբ և յետս խլելով։

Երկար կարելի էր այսպէս շարունակել ցոյց տալու մեր թեմի աւերածութիւնը։ Սակայն մենք այսքանն էլ բաւ ենք համարում։ Սրանով մենք հրաւիրում ենք օրուայ իշխանաւորների, պատասխանատուների, ժողովրդի և էջմիածնի ուշադրութիւնը մի դարման տանելու մեր գաւառի ժողովրդի կորստեան, հողերի գրաւման և առհասարակ Ատրպատականի թեմի աւերածութեանց վրայ, որ առաջացել են այս ժողովրդական ներկայացուցչութեան «երջանիկ» օրերում Անտէրութեան երեսից։

ԻՆՉ Է ՅՈԲԵԼԵԱՆԸ

—

—Յոբելեան կամ յոբելեանական տարին Հրէից մէջ մի կարևոր ժամանակաշրջան էր, որ կրկնւում պատահում էր իւրաքանչիւր 7 տարին կամ մեծ մասամբ՝ իւրաքաչիւր 50-րդ տարին, երբ իւրաքանչիւր տարուկ ազատ էր արձակւում։ Նորանք, որոնք գրաւ էին դրել իրենց կալուածները յետ էին ստանում կամ վերստին սեպհականատէրեր դառնում և տեղի էին ունենում ընդհանուր համաժողովրդական ուրախութիւններ-տօնախմբութիւններ։ 1300 թուին Բոնիֆացիոս Պապը սահմանեց՝ մի տեսակ յոբելեան Հռոմէական Կաթոլիկ եկեղեցոյ համար, որ պէտք է պահուէր ու կատարուէր իւրաքանչիւր 100 տարին մի անգամ և միաժամանակ նա (պապը) շնորհեց մի լիակատար ներում և թողութիւն մեղաց՝ բոլոր նորանց, ովքեր այցելում էին Սրբոցն Պօղոսի և Պետրոսի եկեղեցին Հռոմում և մնում էին այնտեղ 15 օր։ Յոբելեանական տարին այնուհետև ձևափոխուեցաւ Կղեմէս 2.-րդ Պապի ձեռքով և վերածուեցաւ 50 տարիների, Ուրբան Զ-ի ձեռքով 1839-ին՝ 33 տարիների, իսկ Սիքստուս Դ-ի օրով՝ 25 տարիների[1])

Այսպէս ուրմն յոբելեանը մի հաղիսակատարութիւն է իւրաքանչիւր մի[2]) 25, 50 կամ 100 ամեակի՝ որ և է դէպքի կամ որ և է անձի գործունէութեան։

ՍՊԱՆԴԱՐԵԱՆԻ ՄՕՏ

VII [1]

—

Սպանդարեանի սենեակի դռները բաց էին. երբ ծառան մեզ առաջնորդում էր, նա շրջում էր սենեակում յետ ու առաջ։

Սովորական խօսքերից սկսելով հարցրի, ինչպէս է, սպասելով գուցէ ինքը խօսի։

—Տեսնում էք՝ կամ, դեռ ապրում եմ, ասաց Սպանդարեանը. Հայոց աշխարհից կտրուած եմ, չգիտեմ ում են ընտրում կաթողիկոս. քանի՞ մարդիկ մեռան. կաթողիկոսի մահը իմացայ «Köln Zeit» թերթից և շատ ցաւեցի. խեղճ Պետրոս, նա մեռաւ, էհ, կտրուած եմ ամենքից և ոչինչ չգիտեմ։ Ինձ զբաղեցնողը այժմ Մարոկկոն է, շատ և շատ հետաքրքրուած եմ այդ խնդրով։

—Մարոկկոն հարցրի ես զարմացած։

—Այո՛, Մարոկկոյի խնդրով եմ զբաղուած. ինչո՞ւ էք զարմանում, ասաց Սպանդարեանը. կուլ գնացող ազգի զաւակ եմ, այրուող սիրտս դժոխային քաղցրութիւն է զգում, երբ տեսնում է, որ զօրեղին աւելի զօրեղն է ուզում կլանել...

Ներկայ քաղաքական հարցերի մասին բաւականին խօսեց Սպանդարեանը։

Խօսքի ընդհատումից օգտուելով ասացի՝ասում են, որ Ձեր դատը դեռ չէ վերջացել, երկարում է...

[1]) Տես «The National Encyclopaedia».

[2]) Մեզանում ընդհանրապէս 10, 25,30 35 և 40-ամեակներն էլ են տօնում։

[1] Տես «Միտք» №-21

—Հա, կէս նեղացած ու դժկամակութեամբ ասաց պ. Սպանդարեանը, ինչ որ իմացել էք սխալ չէ. էհ քաշքշում են։ Ինձ ագէնտ դարձնելու փորձը չյաջողուեց, այժմս էլ փորձում են աւելի մթնացնել գործը։ Գործը երկարեց Պոլսնիուսի մօրուքի պէս։

—Դուք գիտէք Պոլսնիուսի մօրուքի պատմութիւնը. այնքան համբերող Համլէտը կարեց այդ մօրուքը

—Դարձեալ երեք շաբաթ ժամանակ եմ տուել իմ հակառակորդներին. ինչ որ ունեն բերելու, ապացուցանելու, հաստատելու, թող բերեն։ Այդ երեք շաբաթն անցնելուց յետոյ՝ ես ինձ իմ տուած խօսքից ազատ եմ համարելու, և այն ժամանակ ես կը խօսեմ, վերջացրեց Սպանդարեանը և խնդրեց, որ ուրիշ բաներից, ուրիշ գործից խօսենք։

—

Վերջաբան

Ով որ Սպանդարեանին մի կամ երկու տարի չի տեսել, հազիւ թէ նրան ճանաչի, այնքան մաշուած է ու բարակած։ Նրա դէմքի վրայ դրոշմուած է տանջուած հոգին. միայն աչքերն են յիշեցնում ամենքին յայտնի դէմքը։ Անտարակոյս նա կարօտ է հանգստութեան և խնամքի։

Այն ամենը, ինչ որ դաշնակցական շրջաններում խօսում էին, իբր թէ նա հազարներ է ստացել և ստանում իր կուսակիցներից և համակրողներից, բոլորն էլ երևակայութեան և ենթադրութիւնների արդիւնք են։ Այդ մասին արած հարցմունքին՝ ըՍպանդարեանի մի ժպիտն արդէն պարզ էր ամենքիս համար ցաւալի իրողութիւնը։ Ոչ բարոյական և ոչ էլ նիւթական որևէ աջակցութիւն նա չէ ստացել Կովկասից այս մօտ ինն ամիս ժամանակամիջոցում։

Մինչդեռ յայտնի ամբաստանութիւնը «Դրօշակում» յայտարարուելուց յետոյ՝ ամենքն էլ, թէ մամուլի միջոցով և թէ բանաւոր ցանկանում, պահանջում էին, որ նա գնայ զբրպարտիչներին մերկացնէ, դատարանով պատժել տայ... Նիւթական առաջ թող կանգ չառնի, իրանք ամեն բան կանեն, ասում էին նրանք։

Բայց... բայց ո՞րտեղ է հայոց ինքնաճանաչութիւնը, ո՞րտեղ է ազգային արժանապատուութեան զգացումը և վերջապէս ո՞րտեղ են նրանք որոնք տասնեակ տարիներ շարունակ ոգևորուել են նրա քարոզած գաղափարներով։

Նիւթական օժանդակութիւնը թող մի կողմը մնայ, գոնէ պարտաւոր էին բարոյական աջակցութիւն ցոյց տալ։

Բայց ե՞րբ է հայը դէպի իր գործիչները իր պարտքը կատարել նրանց կենդանութեան ժամանակ։

Յուլիսի 2, 1911. Պ. Թ.

Փարիզ։ «Հովիտ» (Վերջ) [2])

ՄԱՄՈՒԼ

I.

Հազիւ թէ երկու կարծիք լինի այն մասին, որ Օսմանեան կայսրութեան մէջ ամենից հալածուածը, տուժողը և իրաւազրկուածը հայերն են, այն ևս սահմանադրութեան օրերում և հակառակ հայոց խիստ օրինապահութեան և հաւատարիմ քաղաքացիութեան։

Հողերի գրաւում, ջարդեր, արտագաղթ, ըստ առաջնոյն, շարունակւում են ամենայն անդիմադրելիութեամբ։ Այս բոլոր զուլումների դէմ ինչ է կատարւում Տաճկաստանում։

—Անվերջ թագրիրներ կամ բողոքա-յիշատակագրեր, որ շարունակ տեղում են պատրիարքարանից և միշտ պատասխան ստանում անկատարելի գեղեցիկ խոստումներ։

Կ. Պոլսում խմբագրուող «Կոհակ» պատկերազարդ շաբաթաթերթը այդ իրողութիւնը քննութեան է առել թիւ 28-ի մի խմբագրականով, որի վերնագիրն է «ՅԱՐԳԱՆՔ ՆԵՐՇՆՉԵՆՔ». առաջ ենք բերում այդ յօդուածից հետևեալը։

Ափսոս որ քառորդ տարու կեանքը դեռ խելքի չբերաւ մեր ժողովուրդը, որ վերջին վեցամսակին մէջ 37 անգամ աղերսող մրիրներով իր յօշոտուած դիակները, լկուած կոյսերը, ըրոնաբարուած հարսերը, յափշտակուած կալուածները, բռնի կրօնափոխ եղողները, խոշտանգուածները և հազար ու մի տեսակ անիրաւուածները արդարութեան առեանին ներկայացուց և սակայն անգամ մը միաքէն չանցուց իր միւս համշիրակներուն նման ծառանալ [1]) չարագործութեան դէմ։

Մանաւանդ հիմա, երբ բրնութեան ու կեղծիքի խորհրդարանը լուծուելով, մեր կեանքը նոր եռ ու զեռի մը մէջ պիտի մտնէ, հիմա կ՚ըսենք գոնէ գիտնանք յարգանք ներշնչել մեր հայրենակիցներուն մեզի հանդէպ, գիտնանք մեր սեփական շահերն ու իրաւունքները կորովի թափով հետապնդել, ի հարկին պատրաստ գտնուենք մեր քաղաքացիական շառաչուն ապտակն իջեցնելու բոլոր անոնց, որոնք գիտեն իրենց կամքը պարտադրել մեզ և անպիտանալ մեր իրաւունքները։...

Բոլոր վերածնուող և ազատագրուող ժողովրդների դերը փոխանակ բողոքների, պիտի լինի պահաջողի դերն ու դիրքը գրաւել։ Հակառակ պարագային պիտի վճարել ռայեայի տուրքը և վգին նստած թողուլ բռնաւորին։

Π

Նշանաւոր քննադատ-գրականագէտ Ա. Զօպանեանը իրեն յատուկ ճոխ ու ոլորուն լեզուով գեղեցկիմաստ յօդուածներ է նուիրել մեր սիրելի բանաստեղծ Յովհ. Յովհաննիսեանին՝ «Յուսատու Զայն Մը» վերնագրով։

«Զուտ արուեստագէտի», «զուտ բանաստեղծի» սահմանները տալուց և Ռուս. Գերման-Ֆրանս. բանաստեղծութիւններից էլ օրինակներ բերելուց յետոյ, անցնում է բնորոշելու Յովհաննիսեանին իբրև արուեստագէտի։

«Յովհաննիսեանի խառնուածքը կընորոշուի՝ ոչ զօրութեամբ, այլ փափկութեամբ....Յովհաննիսեան ստացած է համալսարանական կրթութիւն... իր մէջ կայ նրբաճաշակ գրահմուտ մը։ Լաւ գիտէ նաև հայերէն, իր լեզուն, միշտ ճշգրիտ, և աւելի ճոխ իր նաև էներէն Շահազիզի կամ Նալբանդեանի լեզուն, Ռուսահայոց մէջ՝ կարծեմ ինքն է որ առաջին կամ դէթ կատարելագոյն օրինակը տուած է ոտանաւոր աշխարաբարի մը, ուր ժողովրդական և դասական տարրերը այդքան ներդաշնակ չափով զուգորդուած ըլլան.....»

«Յովհաննիսեանի տիրական յատկանիշը փափկութիւնն ըլլալով, իր մտածելու, զգալու արտայայտելու եղանակը տոգորուած է՝ գրեթէ միշտ՝ հանդարտ և քնքուշ շնորհով մը, քաղցր խաղաղ և ազնուական մելամաղձութեամբ մը, խորհրդապահ վայելչութեամբ մը, որ թէ վշտի և թէ հրճուանքի ամենախոր արտաղեղմանց մէջ՝ կմնայ անեղծ ու անայլայլ։ Մոնչաձայն փրփրացայտ մոլեգին հեղեղ մը չէ այս քերթութիւնը, այլ վճիտ գետակ մը, որ ողորկ փայլուն մաքուր խիճերու վրայէն՝նազելի երփնագեղ օրօրուն ծաղիկներու մէջէն կհոսի դղրդիւնով մը. և նոյն իսկ երբ իր բիւրեղէ ծոցին մէջ կցոլացնէ արևամուտներու եղերական արիւնը կամ անցնող մրրիկի մը հոսանուտ աղջամուղջը, կպահէ իր ջուրին ականակիա թափանցութիւնը, իր վաղքին դաշն ու անդորը քնքշութիւնը, իր ոստոստուն պայծառ ալեակներուն երգը դողտրիկ։»

«Բիւզ.»-ից

Կոյր կրթի անուղղայ երկրպագուներ. վարագոյրի ետեւ. «Նոր-Աշխարհ»-ը եւ նրա մարգարէութիւնը կատարուած.

—

Սահմանադրական Թիւրքիոյ մայրաքաղաքում, ի շարս բազմաթիւ այլ թերթերի, հրատարակւում էր և «Նոր-Աշխարհ» անունով մի օրաթերթ։

Դա Սոցիալ-Դեմոկրատ Հնչ. կուսակցութեան օրգանն էր, որի առաջին համարը լոյս տեսաւ ներկայ թուի Մարտ $^{5}/_{18}$-ին։

Այդ թերթը հենց 1 համարից բեւեռեց իւր վրայ ընթերցող դասի ուշադրութիւնը։ Այլ կերպ էլ անհնար էր։ Որովհետև դա խմբագրւում էր գրչի տիտան, յայտնի ընկերաբան, պատմագէտ և հազուագիւտ հրապարակախօս Ս. Սապահ-Գիւլեանի ձեռամբ։

Նորա-«Նոր-Աշխարհի»-կեանքը թէպէտ կարճատև, սակայն, չափազանց օգտակար եղաւ։ Նա համակ նիւթ էր և ամբողջապէս պայքար։

Եւ նա կիսաճանապարհին, դաւի ու բռնութեան հետ՝անքով, ընկաւ հերոսի պատուաւոր մահով։

Յայտնի է ընթերցողներին, որ Օսմանեան վերջին պառլամէնդական ընտրութիւններին յաղթանակը տանողը, և այն ամենայն ապօրինութեամբ, եղաւ «Իտտիհատը», որի հետ ursազեղ համերաշխութիւն էր կնքել Հայ. Յ. Դաշնակցութիւնը։

«Նոր-Աշխարհը» շատ կծու և սուր սլաքներ ուղղեց այդ incoherence-աբար գրկախառնուածներին և փաստեց իր №-25-ից սկսեալ, որ նոքա Օսմանեան կայսրութիւնը տանում են դէպի կործանում։

Բայց ո՞վ էր լսողը։ Արդէն ամեն յաղթանակող, մանաւանդ բռնաւոր՝ արբեցած է լինում միշտ իր կոպիտ ոյժով, ուստի և կոյր ու խուլ է ձևանում նա շրջապատի քննադատութեանց առաջ։

Այդ եղաւ և դիրքը մեր «եղբայրացած» բլոկիստների, որոնք միշտ ատամ էին կրճտեցնում «Նոր-Աշխարհի» դէմ։

«Նոր-Աշխարհի» «Հալածանքի եղբայրութիւնը» №-29, «Մամուլի Ազատութիւնը» № №-39 և 40 և «Պատրիարքի փէշերի տակ» հոդոր, ցնցող և կարկամեցնող խմբագրականները փախցրին քունը Իտտիհատ-Դաշնակցական «Սրբազան Դաշնակցութեան»։ Եւ ահա մտածուեց, վարագոյրի ետեւ, կարճել միակ օպպոզիցիոն և յանդուգն օրգանի կեանքը։

Ու երբ գումարուեց բռնութիւններով, կեղծիքով և ոստիկանութեամբ գլուխ հանուած պառլամէնդը՝ «Նոր-Աշխարհը» տուեց իր հռչակաւոր խմբագրականը՝ «Իտտիհատը» մեղադրելի աթոռի վրայ վրայ» վերնագրով։ Դրութեան տէրերը — Իտտիհատականները անմիջապէս զինուորական դատարանի վճռով փակել տուին թերթը, արտօնատէրին մատնեցին զինուորական դատարանի և 500 ոսկի էլ տուգանք դրին թերթի վրայ։

Այն կազմակերպութիւնը, որ ըրնած թէ արթուն միշտ իր շուրջը «մատնութիւններ» է տեսնում, տեսաւ և իմացաւ, թէ ո՞նց և «ի՞նչու համար» դադարացուեց «Նոր-Աշխարհը»։ Անգամ Կովկասեան թերթերը հրատարակեցին, որ «Նոր-Աշխարհը» փակւում է զինուորական դատարանի վճռով և 500 օսմանեան ոսկի տուգանքի դատապարտութեամբ։

Նոքա, որոնք շատ լաւ իրազեկ էին այս գործից՝ ինչպէս և մատնակիցներ, առանց կարմրելու, «Նոր-Աշխարհի փակումից 6 օր յետոյ, մի լուր են հասցնում Բոստոնի յայտնի կամ դեղին մամուլ «Հայրենիքին» թէ՝

Ս. Դեմ. Հնչակեաններու «Նոր-Աշխարհը» նիւթական պատճառով դադրած է։ (!!??)

Նախ, որ 5-6 օրից Պոլսից Ամերիկա նամակ չի հասնի, ուրեմն մնում է ենթադրել, որ «փրկիչներն» այդ «յոյժ ուրախալի» լուրը և մեծ «աւետիսը» փլըֆախօս «Հայրենիքին» հասցրել են հեռագրով։

Ինչո՞ւ, ի՞նչ միտք։ Նախ, որ փողի չգոյութեան պատճառով որևէ թերթի դադարելը ամօթ չէ և տասնեակ հայ թերթեր են այդպէս դադարել, բացի նոցանից, որոնց «ապահովութեան» 100000-աւոր գումարները «ազգասիրաբար» կորզուել են «կեանքդ կամ քսակդ» լոզունգով։

Ի՞նչ արդարացում այդ ստութիւնը հեռագրելում, երբ անգամ «Ազատամարտը» Պոլսում հրատարակել էր «Նոր- Աշխարհի» զինուորական ատեանի որոշմամբ դադարելը։

Ուրիշ բացատրութիւն չունի այս հարցը քան այն, որ որոշ կուրսի մարդոց և խմբակցութեան թարախակալած սրտերում փոխանակ ազնուութեան եռում ու պղպջում է միայն կոյր կիրքը, որին և երկրպագու են մնացել մեր թշուառ կեանքի արթունպահապանները(??!!)

Այժմ տեսնենք ի՞նչ ասաց, «Նոր-Աշխարհը» և ի՞նչ իրականացաւ այնուհետև։

«Նոր-Աշխարհի» №-36-ի խմբագրականն է «Իրթիլաճ վէ Հիւրրիեթ կուսակցութեան դերը», գրուած Ապրիլ $^{17}/_{30}$-ին։

Ահա թէ ի՞նչ ենք կարդում այդ խմբագրականում.

«Իտտիհատ վէ Թէրագգը» կուսակցութիւնն է այսօր կացութեան տէրը՝ բացարձակ հրամայական, ամեն բան ուզածին և ցանկացածին պէս տնօրինողը, ...

, ...

,,Բաղկացուցիչ ազգերը նրա դէմ են, [1]) ոչ թէ նրա համար, որ նա թուրք կուսակցութիւն է,-երբէք, այլ նրա համար, որ նա իր գաղափարաբանութեամբ գալիս է այս երկրի մէջ եղող Ազգերի ապագան փշրելու և ամեն ինչ թրքական, բացառապէս թրքական անելու. (և մեր ,,միակ պաշտպան'' Դաշնակցութիւնը shake hand է անում նորան և ամենայն դիւրութիւններ ստեղծում նորա հայակործան քաղաքականութեան յաջողութեան համար ծ. ,,Միտք''-մի ձրգտում, որ պատմութիւնը դատապարտել, մի գաղափար որ ոչ միայն ամուլ է, այլ և ծայրայեղօրէն վտանգաւոր՝ այս երկրի մնայուն շահերի տեսակէտով'' . . . . . .

,,Վերջին ընտրութիւնների մէջ ''Իտտիհատը'' բացառապէս և միայն թուրք տարրերի շահերից առաջնորդուեց. նրա ձգտումն էր, որ թրքութիւնը ջախջախիչ մեծամասնութիւն կազմի.-այդ պէս էլ արաւ, բայց արուեստական կերպով։ Եթէ կառավարական ոյժը իր յետևը չունենար՝ ,,Իտտիհատ,,-ի անկումն անխուսափելի էր,,։

,,Դարձեալ անխուսափելի է, որովհետև ազգայնական հողը,-որի վրայ կեցած նա իր քաղաքականութիւն է յառաջ քշում՝ ամեն ինչ փշրել փորձելով, այս երկրի համար էն վրտանգաւորն է. նրա վրայ ոչ մի ժամանակ տևական և դիմացկուն տուն կարելի չէ շինել''։

Եւ, իրօք, օսմանեան երկրի այս վերջին օրերի կրիզիսը, պաղամէնդի փակումը, երէկ յաղթող և այսօրուայ փախստական Իտտիհատականների սրբտադող դրութիւնը... ցոյց տուին, թէ որքան ճիշտ կանխագուշակութիւններ էր արել ,,Նոր Աշխարհը''։

Բայց մենք շարունակենք լսել նրան . . . ,,Որպէս Ս. Դեմ. մենք պիտի կռուենք ազգայնականութեան դէմ, որ կողմից էլ որ գալու լինի.-մենք ազգանական ,,Իտտիհատի'' դէմ պայքար ունինք, օրինական հողի վրայ կեցած''։

,,Թուրք էն լաւ, անկեղծ, զարգացած ու հեռատես մտաւորականները ,,Իտտիհատի'' դէմ են, որովհետև նա ''ազգայնական'' է, ուրիշ և ոչ մի պատճառ կայ։ Նրանք շատ լաւ համոզուած են, որ ,,Իտտիհատի'' ,,Ազգայնական'' մտքերը այս երկրի համար շինարար ոչինչ չունեն, բացի անդարմանելի վնասից [3]),,։

Մէհմուտ Շէվքէթի տապալումն ու փախուստը, Սայիդ փաշայի և իր կաբինէտի տապալումը, Իտտիհատականների Սալոնիկում շունչ առնելը, պաղամէնդի փակումը, Զերնօգօրիայի հողագրաւումը և այլն ապացոյց են այդ մարգարէութեանց և ,,անդարմանելի փաստերի''։ Վայ ,,Իտտիհատի'' կլիենտին։

Զմեղադրեմք ուրիշներին, երբ մեմք եմք մեղաւոր եւ մեմք եմք ծնում Յուդաներ

—

Հայոց պատրիարքը Բ. դրանը ներկայացրել է մի յայտագիր, Անատոլիում տեղի ունեցող հայկական անվերջ ջարդերի և քիւրդերի յարձակումների մասին։

«Հորիզոն» № 163, I էջ
սինակ 6, Յուլիս 29.

—

Մեզ հայերիս կոտորում էին Համիդի օրով՝ նախքան սահմանադրութիւնը։ Եւ այդ մասամբ գոնէ բացատրւում էր։ Ասում և հաշտւում էինք՝ թէ իշխում է արիւնարբու կամ Կարմիր Համիդը։

Իսկ հիմա... Հիմա, երբ սահմանադրական երկիր է Օսմանեան կայսրութիւնը։ Այժմ ի՞նչպէս բացատրել։

Չէ՞ որ այժմ, կամ գոնէ մինչև մի քանի օր առաջ՝ երկրի ղեկավարութիւնը գտնւում էր Իտտիհատի ձեռքում։ Իսկ նոյն Իտտիհատը Համիդի օրով Եւրոպա ապաստանած և նրա երեսից փաստական թիւրք յեղափոխականների մի խմբակցութիւն էր։Ուրեմն ի՞նչ... Ընդունել որ երէկուայ յեղափոխականները ջարդարարները են կամ ջարդերը սրբագործող և դրանց մատի արանքով նայողները։

Դժուար է բացատրել։ Առաւել դժուար այն պատճառով, որ Իտտիհատի հետ համագործակից, համախոհ ու համերաշխ է Հայ Յ. Դաշնակցութիւնը։ Նա, որ հայ ազգի կամ՞ ներկայ օրերի տերմինօլօգիայով՝ հայ աշխատաւորութեան «միակ պաշտպանն» է։

Չէ՞ որ սա պիտի կարսեցնէր այդ ջարդերից՝ Իտտիհատեան կառավարութիւնը։ Չէ՞ որ նա Իտտիհատի ականջն ի վեր պիտի բռնար՝ գոնէ... ի սէր մեր «եղբայրութեան»... վերջապէս հերիք ջարդէք հայերին...

Սակայն մենք ոչինչ այդպիսի հակընդդիմութիւն չտեսանք։ Տեսանք ու զգացինք դատապարտելի համախոհութիւն և յանդիմանելի լռութիւն հանդէպ Իտտիհատի հայակործան քաղաքականութեան՝ մեր «փրկիչների» կողմից։

Ուժեղի համակերպութեան դէմ երէկ միլիոններ ծախսող և հայ կրտրիճներ արձանացնող կուսակցութիւնը այժմ գտնւում է իր երբեմնի վատաբանած խիստ դատապարտելի դերում.. Որպիսի՞ անկում։

Յուդան կաշառուեց 30 ոսկով և ծախեց-խաչեց անմահութիւնը։

Մեզանում, երէկուայ փրփրերախ և անսանձելի յեղափոխականները փոքրացան մինչև իսպառ՝ և մեպուսութեան [1])11 աթոռի համար ծախեցին ազգ, պատրիարք ու պատրիարքարան և հողային հարցը ու ամեն անկապտելի սրբութիւն։

Երբ թագաւորում էր յաւիտենական անարգանքի բաժին Համիդն իր եաթաղանով, մենք՝ ի դէմս մեր լաւագոյն բանաստեղծների, պատրիարքների և կաթուղիկոսների՝ դիմում էինք Եւրոպային և բողոքներ բարձրացնում։ Երբ մեզ չէին լսում՝ ծաղրում էինք ասելով.

—Արդեօք Եւրոպ. յուգեցաւ քո արեան պասքը։

Զբաւականացած այդքանով, մենք Եւրոպայի միջամտութիւնն էինք պահանջում յանուն Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի։

Անցաւ վերջապէս... դիսպօտիզմը և, ո՞վ հրաշք, ջարդուող հայերից մէպուսներ բարձրացան ազգի պատգամաւորական ժողովասրահը։

Ամենքս հրճւում էինք... Մեր դատն արդէն պաշտպանուած է։ Տաճկաց... ռայխստագում բազմած՝ հայ «հռետորներ» ունինք։

Սակայն յուսախաբութիւն։ Մեր «հռետորները» այնտեղ փառաւոր մումիաների դեր են կատարում և դորա համար ամիսը 50 Օսմ. ոսկի ռոճիկ ստանում։

Հայաստանում թագաւորող ջարդերին վերջ ու վախճան դնել ձգտողները և երէկ՝ Հահէյ վազողները այսօր խնկարկելից «սուրբ սուրբ» են երգում յանցապարտ Իտտիհատին ի հաճոյս, մինչդեռ անդին՝ միայն չորս Մահմեդական Ալբան պատգամաւորներ են բողոքում հայերի ջարդի և Հայաստանում հոսող արեան դէմ։

Այս բոլորից յետոյ մենք երես ունի՞նք մեղադրելու Եւրոպային և ինչպէս մեղադրենք, երբ վատթար Յուդաներն են մեր պատուի ու կեանքի պահապանները Տաճկաստանի պատգամաւորաց պալատում։

Դեռ աւելին կայ։ Ամբողջ երկիրը Իտտիհատի դէմ է։ Ազատական և ազնիւ Օսմանցիները և բոլոր բաղկացուցիչ տարրերը տապալել են ուզում Իտտիհատեան լուծը և տապալեցին, փակելով նաև կեղծիքի պառլամենտը։

Իտտիհատի քաղաղական ազդեցութեան մահն ազդարարող համօսմանեան այս պատմական յաղթանակից տրտմաթախիծ և ծուփք ի ճակատ, թուիցս մի քանի օր առաջ, երկու շէֆ Դաշնակցականներ ներկայանում են Պոլսոյ Գերմանական դեսպանին և խնդրում աջակցութիւն՝ Իտտիհատին։ Մինչդեռ երէկ էր, որ Զաւարեանը գուժկան էր հանդիսանում «Ազատամարտում» Իտտիհատի խոստումնադրժութեանց դէմ։ Իտտիհատի օրով էր որ սրածուեցան Կիլիկոյ 20,000 հայերը։ Իտտիհատի օրով է, որ Զարսանճակի հողերը խլուեցան և կառուցուած եկեղեցիի քանդման հրաման տրուեց։ Իտտիհատի կամայականութիւնն է, որ հայ և օտար պատրիարքարան. դարաւոր արտօնութիւններին ձեռնամերձ է ուզում լինել։ Վերջապէս Իտտիհատեան կառավարութեան ժամանակ է հայոց պատրիարք յիշիալ բողոքը անվերջ ջարդերի դէմ։

Եւ ահա այդպիսի «անարատ» ու ,,հայասէր'' դաշնակցի համար մեր Դաշնակցականները Գերմանական դեսպանի աջակցութիւնն են հայցում։ Երևի դեռ բաւականաչափ չեն ջարդուել հայերը, կամ դեռ ևս էլի մէպուսական նոր աթոռներ են խոստացուած ի գին արեան ջարդուող հայոց։

Եւ Այսպիսի տղմաթաթաւ մարդոց կենդանոյն..X-երն ու չքոտիՇիրազցիները մեր փէշերն են քաշում, մեզ մեղադրում ,,մատնութեան'' կաշառման և աջահամբուրութեան մէջ։ Ծտին դրուած չէ առծուի թռիչք և ոչ էլ Թերսիդէսները հայհոյելով ու անապարծութեամբ Աքիլլէսներ կլինին։

Դառն է մեր ժամանակը...սրբապիղծների և անզգամների թագաւորութեան շրջան և այստեղ է որ մեծագոյն բանաստեղծն ասել է.

For who would bear the whips and scorns of time . . . . .
The insolence of office . . .
That patient merit of the unworthy takes...[2])

Hamlet (Act III.)

Ա. Տ. Վ.

[1]) Բացի Դաշնակցականներից, որոնք ազգը ծախեցին Իտտիհատին, Օսմանեան պառլամէնդում 11 ,,աթոռ գրաւելու համար. (ծ. ,,Մտքի''-ի)

[2]) Ընդգծումը ,,Միտք''-ինն է.

[3]) ,, ,,

[1]) Օսմանեան պառլամէնտի պատգամաւորները կամ անդամները մէպուս են են կոչւում։

[2]) . . Ո՞վ արդեօք կուզէր հանդուրժել
ժամանակի ծաղրին և մտրակներին
. . . . . .
Պաշտօնեաների անզգամութեան
Բոլոր թուք ու մուրին, որ անարժանից
Կրում է համբերող արժանաւորը.

Շեյքսպիր. Համլետ. III արար.
«Լինե՞լ թէ չլինե՞լ»-ից
Թարգ. Յովհ. խան Մասեհեանի

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

—

Վեհափառ Կաթուղիկոսից կոնդակ է ստացուել յանուն թեմիս սրբազան առաջնորդ Կարապետ եպս-ի՝ հրահանգելու հոգաբարձութեանց՝ Սուրբ Թարգմանչաց տօնին հանդիսով տօնելու հայոց տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400 ամեայ յոբելեանը։

Մեզ հաղորդում են, որ թեմիս առաջնորդը վեհի թոյլտուութեամբ անցնելու է Բագու թեմիս դպրոցների և առաջնորդարանի համար հանգանակութեան ձեռնարկելու։

Ղալայի հոգաբարձութիւնը ի դէմս հոգ. անդամ և երեցփոխ պ. Ա. Բարխուդարեանի յայտնում է, որ Ս. Ածածնի այգում այլոց խստիւ արգելւում է մոմ ծախել։ Ծախու մոմերը կգրաւուեն։ Հոգաբարձութիւնը պատիւ ունի խնդրելու յարգոյ հասարակութեան, որ կամ ինքը ինքնաբերաբար սկսի մի հանգանակութիւն և կամ օժանդակի հոգաբարձութեան սկսելիք հանգանակութեան, Ս. Ածածնի շէնքերի նորոգութեան և մի քանի նոր ու անյետաձգելի ծածկոցների շինութեան համար։

Առաջնորդական փոխանորդ Տ. Կարապետ քհնն. ամսոյս 8-ին հաստատել է Լիլաւի վերջին անգամ ընտրուած հոգաբարձական կազմը։

Ղալայի հոգաբարձութիւնը Արամեան դպրոցում սկսել է հիմնական նորոգութիւններ։

Մեզ հաղորդում են որ արդէն Սրփահտար Ազամը ժամանել է Նէմաթ-Արադ, ռուսաց գենեբալնի հիւպատոսարանի ամառանոց գիւղը, այնտեղ է գնացել և հաճի Շօջա-էդ-Դովլէն։

Կենտրոնականի տեսուչ պ. Յոնան Դաւթեանի վերադարձն իր պաշտօնին մի անակնկալ է եղել հասարակութեան գիտակ և իրազեկ շրջաններին։ Լսում ենք կենտ-ի աշակերտներից բողոք են ներկայացրել հոգ-թեան պ. Դաւթեանի տեսչական պաշտօնին վերակոչուելուն դէմ։ Տեսչի առողջական թոյլ վիճակի համար նման պաշտօնավարութիւն խիստ ծանր է և այդ բանն ամիսներ առաջ պարզուել է կենտ-ի հոգ-թեան համար, ուստի հասկանալի է հասարակութեան զարմացքը այդ առթիւ։

Ռուսական զօրամսի արշաւանքը խիստ նեղն է դրել Շահսուվաններին, այրուել ու քանդուել են ա-

[1]) . . Ո՞վ արդեօք կուզէր հանդուրժել
ժամանակի ծաղրին և մտրակներին
. . . . . .
Պաշտօնեաների անզգամութեան
Բոլոր թուք ու մուրին, որ անարժանից
Կրում է համբերող արժանաւորը.

Շեյքսպիր. Համլետ. III արար.
«Լինե՞լ թէ չլինե՞լ»-ից
Թարգ. Յովհ. խան Մասեհեանի

պստամբների շատ գիւղեր։

Մարաղում 2 շաբաթից ի վեր անյայտացել են 2 ռուս զինուորներ։

Ամսոյս 7 և 8-ին անտանելի շոգերը դադարեցին, եկաւ անձրև և եղան վերջ աշնանային ցուրտ օրեր։

Ատրպատական

Ուրմիոյ գաւառի Կեարդաբադ գիւղը, (117տուն զուտ հայ բնակիչ) Ուրմիոյ շրջանում առաջին հայաբնակ գիւղն է համարւում։ Վերջերս Իսալու գիւղից Գաղթած Տէր Պօղոսը երկպառակութիւն սերմանելով գիւղում, օտարադաւանութիւն է ընդունել և ունի 30 տուն հետևող։ Միւս գիւղացիները բողոքում են առաջնորդարանին, որովհետև կրօնափոխ եղածները գիւղական զանազան խնդիրներում զօռում են իրենց եղբայրներին։ Առաջնորդարանի և Ս. Էջմիածնի ուշադրութիւնն ենք հրաւիրում։

Սէյդավար, Շորաւ և Ուրմիոյ շրջան ձեռքից գնացին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Լօնդօն. 27 Յուլիս. Ռէյտէրի գործակալութեան հաղորդում են, որ Բրիտանական կառավարութիւնը համաձայնութիւն է յայտնել տալու Պարսկաստանին հեռաւոր աւանս, նպատակ ունենալով աջակցութիւն ցոյց տալու պարսից կառավարութեան՝ ձեռք առնելու առաւել գործնական միջոցներ կռուելու այն դրութեան դէմ, որ ստեղծուել է հարաւում։

ԱՐՏԱՔԻՆ

—

Ֆրանսիական հանրապետութեան մինիստր նախագահ պ. Պուանկարիէն Պետերբուրգում.

Յուլիս 28. Պուանկարիէն ժամանեց Պետերբուրգ՝ Նիկոլայեվեան կամուրջը, առ. ժամը 10-ին ծովային մինիստրութեան «Նեվա» յածանաւի վրայ։

Պրիմիերին ողջունելու եկել էին՝ Վ. Ն. Կոկովցեվ, Ս. Դ. Սազոնով, ծովային մինիստրութեան օգնական Մ. Բ. Բուբնով, ծովային գեներալ շտաբի կառավարիչ կնեազ Ա. Ա. Լիվին, Պետերբուրգի ֆրանսական դեսպան Ժորժ Լուին, ֆրանսական դեսպանատան պաշտօնեայք, արտաքին գործոց մինիստրութեան պաշտօնեայք։

Մամուլի կարծիքը

Պարիզ

Ֆրանսական մամուլը չափազանց գոհ է Ռուսաստանի՝ Պուանկարիէն ցոյց տուած սրտագին ընդունելութիւնից, որ շատ աւելի է՝ քան ցարդ ցոյց է տրուել մի մինիստրի.

Վիեննա

Վիեննայի մամուլը շարունակում է եռանդուն կերպով զբաղուել Պուանկարիէի Ռուսաստան գնալով, բայց աւելի հանդարտ տոնով քան առաջ։

Իտալական մամուլի զսպուածութիւնը

ՀՌՈՎՄ.

Իտալական մամուլն ընդհանրապէս իրեն զսպուած է պահում կոմենտարիաներից Պուանկարիէի Ռուսաստան արած այցելութեան առիթով։

Միայն Միլանի ազդեցիկ «Corriere della Sera»-ն նկատելով այն փակտը, որ Ռուսիան պատերազմի վերջանալու հարցը դրել է իւր դիպլօմատիկան բանակցութեանց ծրագրի մէջ, արտայայտւում է նեղուցների բացման անհրաժեշտութեան համար ռուսական զինուորական նաւատորմի առաջ։

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Ապստամբութիւն Ալբանիայում

ՏԷՌՕՐ ՄԻՏՐՕՎԻՑՈՒՄ.

Բէլգրադից Յուլիս 28 թուով հեռագրում են. Ջաֆէր-Բէյը, Միտրօվիցի զօրքերի վրայ նոր նշանակուած հրամանատարը, Իպէկից եկաւ Միտրօվից, ուղեկցութեամբ 5 հետևակ գնդերի և մի քանի բատարէաների։

Նորա մարտահրաւէր ընթացքը առաջին օրերից այնպէս գրգռեց ալ... աններին, որ Նորա համար կայացրին ... ֆճիռ, որի համար և Նորան հ... եցին։ Ջաֆէր-Բէյը այնքան սաստիկ վախեցել է, որ անմիջապէս մեկնել է Նովի-Բազար։

Բանակցութիւնները Կոմեսիայի հետ.

Իրերի դրութիւնը Կոսովայում ըստ առաջնոյն մնում է լարուած և սպառնալից։

Ֆերիզովիչում ալբան պարագլուխները կրկին խորհրդակցութիւն են ունեցել և մշակել 18 կէտերից բաղկացած դժուար ընդունելի առ...ջարկներ, որոնք յանձնուել են կ...առավարական կոմիսիային Պրիշտինում։

Կոնֆլիկտ Ջէֆի փաշայի հետ

Ըստ լուրերի, Ալբանական զօրքերի ընդհ. հրամանատար Ջէքի փաշայի և կառավ. կոմիսիայի միջև Պրիշտինում ծագել են տարաձայնութիւններ։

Ջէքի փաշան հրաժարւում է կատարել կոմիսիայի կարգադրութիւնները և սպառնում է հրաժարական տալ։

Բօլգարիա

Ինքօկնիտօ Վիեննա այցելած և վերջերս իւր իւր Վենգրիական կալուածքում եղող (մինչև աշուն) Ֆերդինանդը յանկարծ եկաւ Սօֆիա։ Ճանապարհին նա մի օրուայ ընթացքում մի քանի անգամ ստացաւ ընդարձակ հեռագիրներ։

Կաչանիկում սպանուել են շատ Բօլգարներ։ Դա խիստ յուզել է Բօլգարական հասարական կարծիքը։ 30,000 անոց մի բազմութիւն ցոյց սարքելով կոչ է անում արշաւել դէպի Ադրիանապօլիս՝ Թուրքերի դէմ։

Պօլսի Բօլգարական դեսպան Սարաֆովը Տաճկաց արտաքին գործոց մինիստր Նորատունկեանին իր կառավարութեան կողմից եռանդուն առաջարկութիւններ է արել։ Կառավարութիւնը խոստացել է լիակատար բաւարարութիւն։

Թիւրքիան ծանր մտահոգութեան մէջ է և Չերնօգօրիայի կողմից։ Ցետինէի Տաճկաց դեսպանը իր լիազօրութիւնից դուրս 24 ժամուայ ուլտիմատում տուած լինելով Չերնոգօրիային՝ առաջացրել է մեծ բարդութիւն՝ ուստի և յետ է կանչւում։ Դեսպանը Յուլիս 26-ին թողել է Չերնօգօրիան։

?.. յութեան բանակցութիւններ

...նեւ 28 Յուլիս-ից. տեղական մամուլը հաւաստում է որ Ցիւրիխում վերսկսուել են հաշտութեան բանակցութիւնները իտալական և տաճկական պատուիրակների միջև, ընդ նախագահութեամբ իտալական թագաւորի հօրեղբօր-Գենուէզեան հերցօգի։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Կանացի հրաշալի բլուզներ, Եգիպտական էշարփներ և վզկապներ, կանացի քաթանէ կաշմիւմներ, Բաթիսթ գոյնզգոյն կտորներ, փէշեր և եուպկաներ, Զանազան արժէքի լիֆչիկներ։

Թարմ շվէյցարական շօկօլադ և բօմբօն։

ԲԱՑՈՒԵԼ Է ԲԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒՄ... ՆՈՑՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ

բուժարան (լէչէբնիցա)

Արժէքները չափազանց մատչելի են։ Աղքատները բժշկւում են բոլորովին ձրի։ Հիւանդներ ընդունւում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

ՊԱՏԱՆԻ Գրական, Գեղարուեստական, քննադատական ամսաթ. բաժնեգին է Թիֆլիզում 1ր. դուրսը 1,25 արտասահման 5 ֆր. Թիւրքիա 20 ղրշ. հասցէ Tiflis Surp-Minassky, № 26 Missak Eprikiantz

---

ԲԱԶՄԱՎԷՊ — Ազգային-բանասիրական-գրական-գիտական ամսաթերթ 70-րդ տարի, բաժնեգինն է ֆր. 10, րբ. 4, դոլ 2, ղրշ. 50
Հասցէ՝ Rédaction de la Revue «Bazmavep»
St. Lazare Venise (Italie)

ԿԱՅԾ —Օրգան Սօց-Դեմ. Հնչ. Կուս. Պօլսոյ Ուս. միութեան. Հասարակական գիտական,
ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ 2-ՐԴ ՏԱՐԻ

Բաժնեգինն է { Թիւրքիա 12 ղրուշ, Ամերիկա 1 դոլ. արտասահման 4 ֆր.

հասցէ Rédaction «KAIDZ»
poste Centrale 97. Constantinople (Turquie)

ԿՈՀԱԿ Պատկերազարդ թերթ, գրական, քաղաքական, տնտեսական և ընկերային. Տէր և տնօրէն Հմ. Արամեան

Բաժնեգինն է { Պօլիս և գաւառները 15 ղրուշ, Ամերիկա . . 1 դոլ, Արտասահման . 5 ֆր. Ռուսիա և Պարսկ. 2 րբլ.

հասցէ Rédaction «GOHAG» B. P. Centrale, 125 Constantinople

ԴՕՔՏՕՐ ՍԱՐԳԻՍԸ

Ամէն ուրբաթ օրերը ժամը 2-ից, կէսօրից յետոյ, ձրի խփում է աղքատների և չքաւորների երեխաների ծաղիկները։



«ԶԻՆԳԵՐ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Թաւրիզի բաժանմունքը նկատի ունենալով, որ պատահում են դէպքեր, երբ յաճախորդները վերցրած մեքենաների արժէքը լրիւ չվճարած ծախում կամ գրաւ են դնում, ուստի թիւրիմացութիւնների և դժգոհութիւնների տեղիք չտալու համար, յայտարարւում է Թաւրիզի յարգելի հասարակութեան, որ



ընկերութիւնը որոնումներ կատարելով կգտնի և դատարանի միջոցաւ կգանձի իւր պահանջի մնացորդը և պատասխանատուութեան կենթարկի թէ ծախողին և թէ գնողին, որպէս ուրիշի սեպհականութիւնը իւրացնողների։ Համաձայն «ԶԻՆԳԵՐ» ընկերութեան մէջ տիրող կանոնների, իւրաքանչիւր գնող՝ մեքենայի արժէքը լրիւ վճարելուց յետոյ, ստանում է տպագրուած և կնքուած մի զօզումէնդ, որի մէջ նշանակւած է լինում մեքենայի նոմերը և արժէքը, և այս դէպքում միայն—մեքենան դառնում է վերոյիշեալների մասնաւոր սեպհականութիւն և ընկերութեան կողմից դրուած այդ դօզումէնդների հիման վերայ նոքա իրաւունք ունին ծախել կամ գրաւ դնել ըստ իրենց ցանկութեան։

«ԶԻՆԳԵՐ» ընկեր. Ատրպատ.-ի ընդհ. ներկայացուցիչ
ԱՐՄԵՆԱԿ Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ